ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 01.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-13/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.11.2014թ. N 73-1/697739-14 գրությամբ ներկայացված «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03308717) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-13/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-13/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.11.2015թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.11.2014թ. N 73-1/697739-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.11.2014թ. N 01/61-13994 գրության պատճենը:

2. **<u>«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշում</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 27.11.2014թ. N 09/032-1927 գրությամբ դիմել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 12.12.2014թ. ՍՄ-14/16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքվել է «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի Թևոսյան 12 հասցեի մեքենայական բաժնի տանիքի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն-ների գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Ընկերությունը նշել է, որ կատարողական ակտով բաց թողնված (տանիքի գոլորշամեկուսացում 1 շերտ ռուբերիոդ(տոլ) 1360 ք.մ) 1156.0 հազ. դրամը՝ թյուրիմացության արդյունք է եղել, վրիպակ և Ընկերությունը պարտավորվել է տալ պակասեցում հաջորդ կատարողական ակտով:

Ընկերությունը հայտնել է նաև, որ տանիքի ծածկում իզոգամով 2 շերտ 690 ք.մ 2725.5 հազ. դրամի աշխատանքները բաց են թողնվել հապշտապ, ոչ ճշգրիտ հաշվարկի արդյունքում: Հաշվի առնելով, որ շինարարը չէր տեղավորվել իր աշխատանքային գրաֆիկով ստանձնած պարտականությունների կատարման գործընթացում, այն է՝ աշխատանքները պետք է ավարտեին մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ը, և այն հանգամանքը, որ շինարարը այդ ակտով չէր ավարտում իր իսկ աշխատանքները և այն, որ շուրջ 6225.0 հազ. դրամի աշխատանքներ դեռևս կային ավարտին հասցնելու համար, հաջորդող ակտերում վերը նշյալ բացթողումները պետք է շտկվեին Ընկերության կողմից:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ երկշերտ իզոգամով ծածկման աշխատանքներն այդ պահին ընթացել են և մոտ էին ավարտման: Երևանի քաղաքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը և պահանջել մուծել տուժանք՝ 70 000 ՀՀ դրամ գումարի չափով, որը Ընկերության կողմից վճարվել է:

Կենտրոնում 26.01.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ վճարել է տուժանքը՝ 70 հազ. ՀՀ դրամ գումարի չափով, և միևնույն ժամանակ, պարտավորվում է վճարել Պատվիրատուի կողմից հաշվարկված տուգանքը և տույժը:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն Կենտրոնին է ներկայացրել 3500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տուգանքը և 22750 (քսաներկու հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ տույժը Ընկերության կողմից 23.02.2015թ. վճարված լինելու փաստը հավաստող ապացույցներ:

3.Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.11.2014թ. N 011/032-1822 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով տալ կարծիք և տրամադրել Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Պատվիրատուն 27.11.2014թ. N 02/61-6636Հ գրությամբ Կենտրոնին է ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 17.06.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-14/79» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագրի պատճենը և նշված պայամանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցման, ինչպես նաև այն լուծելու համար հիմք հանդիսացած գրությունների պատճենները:

Կենտրոնը 29.01.2015թ. N 011/032-122 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով հաշվարկված վնասի, տույժի և տուգանքների գումարներն Ընկերության կողմից վերականգնելու վերաբերյալ՝ առանձին նշելով վերոհիշյալ գումարների չափերը:

Պատվիրատուն 11.02.2015թ. N 02/61-4732Հ գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնությամբ սահմանված 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամը 04.11.2014թ. վճարել է:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն տեղեկացրել է, որ գնման պայմանագիրը միակողմանի լուծելու հետևանքով Ընկերությունը, համաձայն նշված պայմանագրի 5.2 կետի, պետք է վճարի 3500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տուգանք և 5.3 կետի՝ 22750 (քսաներկու հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ տույժ (09.09.2014 թվականից մինչև 13.11.2014թ. ընկած ժամանակահատվածի համար):

Կենտրոնում 26.01.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները պնդել են գրություններով ներկայացրած դիրքորոշումները:

4. ՍՑ-ԳԲԽ-18/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.11.2015թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 11.11.2014թ. N 73-1/697739-14 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-18/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 11.11.2014թ. N 73-1/697739-14 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 17.07.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-14/79» ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների գնման պայմանագիր:

2. Պատվիրատուի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի միջև 24.07.2014թ. կնքված աշխատանքների կատարման պայմանգրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել են 41 առանձին աշխատանքներ, որոնց նկատմամբ պետք է տեխնիկական հսկողություն իրականացներ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն:

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել են Ընկերության՝ որպես տեխնիկական հսկողություն իրականացնողի պարտակա-նությունները:

4. Երևանի քաղաքապետարանի և շինարարական աշխատանքներ իրականաց-նող «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի միջև 01.10.2014թ. ստորագրված կատարողական ակտը վավերացվել է տեխնիկական հսկողություն իրականացնող «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից:

5. 13.10.2014թ. Պատվիրատուի կողմից շրջայցի ժամանակ արձանագրվել է, որ 01.10.2014թ. կատարողական ակտում ներառված 2 աշխատանքները՝ տանիքի գոլորշա-

մեկուսացում 1 շերտ տոլից և տանիքի ծածկում իզոգամով 2 շերտ, դեռ չեն իրականացվել:

6. Պատվիրատուն «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին ուղղված 17.10.2014թ. թիվ 61/3417 գրությամբ հայտնել է, որ 13.10.2014թ. Պատվիրատուի կողմից շրջայցի ժամանակ արձանագրվել է, որ 01.10.2014թ. կատարողական ակտում ներառված 2 աշխատանքները՝ տանիքի գոլորշամեկուսացում 1 շերտ տոլից և տանիքի ծածկում իզոգամով 2 շերտ, դեռ չեն իրականացվել, ուստի Ընկերության կողմից փաստացի չեն կատարվել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական բնութագրով սահմանված պարտականությունները, մասնավորապես չեն ստուգվել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, չեն կատարվել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են շինարարական պայմանագրի իրականացման շրջանակում:

7. Պատվիրատուն «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ուղղված 31.10.2014թ. թիվ 61/3417 գրությամբ հայտնել է, որ միակողմանի լուծում է Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 17.07.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-14/79» ծածկագրով տեխնիկական հսկողություն իրականացնելու պայմանագիրը:

8. Պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով Ընկերությունը միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնությամբ սահմանված 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամը վճարել է 04.11.2014թ., իսկ 23.02.2015թ. վճարել է հաշվարկված 22750 ՀՀ դրամ տույժը և 3500 ՀՀ դրամ տուգանքը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-13/14 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

Պատվիրատուի և Ընկերության միջև 17.07.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-14/79» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագրով Ընկերությունը ստանձնել է «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի Թևոսյան 12 հասցեի մեքենայական բաժնի տանիքի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնելու պարտավորությունը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի «ա» ենթակետի համաձայն՝ կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Պայմանագրի թիվ 1 հավելված՝ տեխնիկական բնութագրով նախատեսվել են Ընկերության՝ որպես տեխնիկական հսկողություն իրականացնողի մի շարք պարտակա-նություններ, այդ թվում նաև հետևյալ պարտականությունները՝

- ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար,
- կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են շինարարական պայմանագրի իրականացման շրջանակում:

Այսպիսով, Պատվիրատուի կողմից 13.10.2014թ. շրջայցի ժամանակ արձանագրվել է, որ 01.10.2014թ. կատարողական ակտում ներառված ***2 տեսակի աշխատանքները***՝ տանիքի գոլորշամեկուսացում 1 շերտ տոլից և տանիքի ծածկում իզոգամով 2 շերտ, դեռ չեն իրականացվել, մինչդեռ Ընկերությունը կատարողական ակտը վավերացնելով՝ փաստել է, որ դրանք կատարվել են, ինչի հետևանքով ըստ Խորհրդի Ընկերությունը ***ավելի քան մեկ անգամ խախտել է*** Պայմանագրի թիվ 1 հավելված՝ տեխնիկական բնութագրով նախատեսված պարտականությունները, ինչն էլ հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ավելի քան մեկ անգամ խախտվել են և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև Խորհրդի կողմից սույն որոշման կայացումը Ընկերության կողմից վերականգնվել է, Խորհուրդը արձանագրում է, որ առկա են հիմքեր «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 11.11.2014թ. N 73-1/697739-14 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 11.11.2014թ. N 73-1/697739-14 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Ենոքյան**

Անդամ՝ **Գևորգ Հայրապետյան**